ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33-Ա

«09 » սեպտեմբերի - 2019թ. թիվ 8 արտահերթ նիստ

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 14-ի առաջին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ (4) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Արամ Գրիգորյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Գարիկ Գևորգյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Նարեկ Սիմոնյան | -------------------- | -------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ -------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019 թվականի սեպտեմբերի « 09 »
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11 00

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2019 թվականի
սեպտեմբերի 09 -ի թիվ 8 արտահերթ
նիստի N 33-Ա որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1) Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին.

2) Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրելու մասին:

3) Համայնքի սեփականություն հանդիսացող գույքն աճուրդային կարգով վաճառելու մասին.

4) Գումար հատկացնելու մասին.

5) Դրամական օգնություն հատկացնելու մասին.

6) Համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34-Ա

« 09 » սեպտեմբերի - 2019թ. թիվ 8 արտահերթ նիստ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի հոդված 60-ով, հոդված 76-ի 2-րդ և 3-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12 ապրիլի 2001 թվականի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող 04-048-0202-0024 ծածկագրի 0,2072 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը, մրցութային կարգով, 25 տարի ժամկետով, գյուղատնտեսական կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ նպատակների համար տրամադրել վարձակալության:

1/ Մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրման վարձավճարի չափ սահմանել՝ 6700 /վեց հազար յոթ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ, նախավճարի և մեկ քայլի չափը՝ 340 /երեք հարյուր քառասուն/ Հայաստանի Հանրապետության դրամ.

2. Մասնակցության վճար սահմանել 10000 /տասը հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին հանձնարարելու համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությամբ տրամադրող հանձնաժողովին իրականացնելու սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

Կողմ (4) Դեմ ( 0) Ձեռնպահ (0)

| | | | |
|---|---|---|---|
| Ցուրիկ Ասլանյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Արամ Գրիգորյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Գարիկ Գևորգյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Նարեկ Սիմոնյան | -------------------- | -------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019 թվականի սեպտեմբերի «09 »
գ. Լուսագյուղ
Ժամը՝ $11^{30}$

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

### Ո Ր Ո Շ Ու Մ 35-Ա

«09 » սեպտեմբերի - 2019թ. — թիվ 8 արտահերթ նիստ

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի հոդված 63-ով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի վարչական տարածքում գտնվող 04-048-0004-0038 ծածկագրի 0,0608 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի գույքը օտարել աճուրդային կարգով:

1/04-048-0004-0038 ծածկագրի 0,0608 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի գույքի, աճուրդային կարգով, օտարման մեկնարկային գին սահմանել 300000 /երեք հարյուր հազար / Հայաստանի Հանրապետության դրամ: Նախավճարը և մեկ քայլի չափը՝ 15000 /տասնհինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Մասնակցության վճար սահմանել 10000 /տասը հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Համայնքի ղեկավարին իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները: Աճուրդն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ ( 4 ) | Դեմ ( 0 ) | Ձեռնպահ ( 0 ) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Արամ Գրիգորյան | -------------------- | -------------------- | ---------------- |

Գարիկ Գևորգյան ---------------------- ---------------------- -----------------

Նարեկ Սիմոնյան ---------------------- ---------------------- -----------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ -------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019 թվականի սեպտեմբերի «09 »
գ. Լուսագյուղ
Ժամը՝ $12^{00}$

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 36 -Ա

« 09 » սեպտեմբերի - 2019թ. թիվ 8 արտահերթ նիստ

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի 2019 թվականի բյուջեով հաստատված «Նախադպրոցական կրթություն» 0911 ծրագրի «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» 4637 հոդվածից <<Լուսագյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ին 160000 /մեկ հարյուր վաթսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել նախակրթարանի դաստիարակի աշխատավարձը վճարելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ (4) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Արամ Գրիգորյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Գարիկ Գևորգյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Նարեկ Սիմոնյան | ------------------- | ------------------- | --------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019 թվականի սեպտեմբերի «09»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 12 $^{30}$

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 37-Ա

«09» սեպտեմբերի - 2019թ. — թիվ 8 արտահերթ նիստ

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի սոցիալապես անապահով մի քանի բնակիչների հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

| | Կողմ (4) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Արամ Գրիգորյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Գարիկ Գևորգյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Նարեկ Սիմոնյան | ------------------- | ------------------- | --------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019 թվականի սեպտեմբերի «09»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 13 00

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2019 թվականի
սեպտեմբերի 9-ի թիվ 8 արտահերթ
նիստի 37-Ա որոշման

ՑՈՒ Ց Ա Կ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ
ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Սուսաննա Բաղդասարյանին - 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.
2) Զարիկ Ավետիսյանին - 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

# Ո Ր Ո Շ Ու Մ 38-Ա

«09» սեպտեմբերի - 2019թ. թիվ 8 արտահերթ նիստ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի առաջին մասի 29-րդ և 31-րդ կետերով, հիմք ընդունելով տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի 2019 թվականի օգոստոսի 2-ի նիստի N ԿԱ/126-2019 արձանագրության 6-րդ կետը՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 14-ի N 70 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.01 հա /կադաստրային ծածկագիր՝ 0104-0001/ վարելահող փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ (4) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Արամ Գրիգորյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Գարիկ Գևորգյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Նարեկ Սիմոնյան | ------------------- | ------------------- | --------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019 թվականի սեպտեմբերի «09»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 13 30